Համեմատելով գծ. 25-28-ը, մենք կարող ենք մի հետաքրքիր դիտողություն անել՝ ինչքան առաջարկութեան առարկան հասարակ է, ինչքան քիչ մասերից և բաղկացած այդ առարկան, այնքան մանրամասն ու ճիշտ է հարկավոր ցույց տալ գծագրի միտ առանձին մասերի ձևը, մոտենալով սրանց բնական ձևին: Որինակ՝ ամբողջ չողեքարչը գծագրելու համար բավական է տալ

սրա միայն ուղղանկարը, վորը շատ հեռու չէ մեքենայի բնական ձևից, այն ինչ հասարակ բուխը (գծ. 28) պահանջում է անվի մանրամասն գծագիր, վոր շատ էլ չի դանադանվում տեխնիկական գծագրից, յետեւ չպակասելին չափերը, ու յերկրորդ հարթապատկերը կարելի կլինի որոտգործել նաև արտադրական նպատակներ համար:

Առաջին հայացքից այս տարրինակ է թվում: Բայց այդպիսի պատկերի գծագրերի առանձնահատկութեանները տրամաբանորեն բխում են հենց իրենց նշանակությունից: Յերբ մենք գծագրում պատկերացրել եյինք չողեքարչը, մենք բոլոր վազոնի գծանկարի գիտենալու նրա ծիսնելույի ձևը, կաթսայի կառուցվածքը և այլն: Վորովհետև սրանք վոր մի կապ չունեն առաջարկութեան բնույթի հետ. իսկ յետեւ մենք չողեքարչի համար դատել ենք մի առանձնահատուկ կեռչան, ի հարկե, սրա կառուցվածքն ու ձևն անհրաժեշտ է քաղակալելն մանրամասն ցույց տալ, հակառակ դեպքում մասնագետ-եկապերար չի կարող դատել այդ տեսակի կեռչանի առանձնահատկութեան և առավելութեան մասին: Այստեղ ամեն մի կո-



Գծագիր 29



Գծագիր 30

բութեան, ամեն մի ծակ ու փոս կարող են ունենալ կարևոր ու եյական նշանակություն: Նման դեպք մենք ունենք գծ. 28-ի բուխի որինակում—գոյություն ունեն բաղմատեսակ կառուցվածք ունեցող չափազանց իրար նման՝ վազոնի առանցքակալներ, և կոնստրուկցիաներից մեկը մյուսից դանադանելու և նրանց առանձնահատկութեանները պարզաբանելու համար անհրաժեշտ է տալ նրա մանրամասն գծագիրը:

Յերբեն առաջարկութեան առարկա հանդիսացող մեխանիզմի մի մասն այնքան պարզ ձև է ունենում, վոր պարզաբանել սրա նշա-

նախնական և զննահատել դյուստը կարելի չէ միայն, յեթե այդ կատարված է մեխանիզմի մյուս մասերի, կամ մինչև անգամ հենց ամբողջ մեխանիզմի հետ: Այդ դեպքում անհրաժեշտ է ցույց տալ ամբողջ մեխանիզմը, յեթե մինչև անգամ այդ մեխանիզմում կատարելագործված է վորևէ աննշան մաս: Պարզաբաններ որինակով: զծ. 29-ում ցույց է տված ջրատար խողովակի պնակաձև վինտային կախարիչ ունեցող մի ծորակ:

Հայտնի յեն հարյուրավոր տեսակի կառուցվածք ունեցող ծորակներ, վորոնք ունեն նման մարմին, յուղամաս, պտուտակային ձող, բռնակ և այլն: Վորն է այդ առաջարկված ծորակի նորոգվել և առանձնահատկությունը:

Միայն մի մասն է, այն է շտիֆտը 1-ը (զծ. 29), վորն անց է կացված խտացման տակիլի (2) միջից ու խանդարում է սրան անդից շարժվելու, վորովհետև շարժվելու դեպքում խանդարված կլինի խիտ փակումը: Կարծես թե այս պայմաններում կարելի է կառուցել ծորակի մյուս մասերը, ինչպես մենք պնդում է յինքն վիճակում: Բայց յեթե ւաճման փակվելինք ու գծագրելինք միայն այդ առաջարկության առարկա շտիֆտը, մենք կստանայինք մի անհասկանալի դժագիր: Շտիֆտն ինքն ըստ իր քան այնքան տարրական մի մաս է, վոր ինքն առանձին չի կարող լինել առաջարկության առարկա, իսկ այդպիսին նա կդառնա վորոշ պայմաններում, յերբ նա շինված է այդ ծորակի պտուտակի ձողի ծայրին ու անց է կացած խտացման տակիլի միջից: Հետևապես այս որինակում, առաջարկող հեղինակի միտքը պարզաբանելու համար անհրաժեշտ է գծագրի վրա ցույց տալ ծորակի ամբողջ կառուցվածքը, և սխալ չլինի սահմանափակվել միայն այդ առանձին մասի պատկերացումով:


Բայց նման մի քանի դեպքերում կարող է հարմար լինել մի սերիզ ձև, այն է, վոր յեթե ամբողջ մեխանիզմը, վորի մեջ կատարելագործված է միայն մի վորոշ մասը, ցույց են տալիս սրա սխեման առանց մանրամասնությունների, իսկ կատարելագործված մասի տեղը նշում են վորևէ թվով կամ տառով և ամեն մի առանձնահատուկ մանրամասնություն բավականին պարզ ցույց տալու համար գծագրի մի կողմում այդ մասը գծում են սլիքի մեծ մասշտաբով: Այդ ձևը պարզաբանում է յերկու պատկերների բաղկացած զծ. 30-ը: Մի ապտ. 1-ը նեկատացնում է սխեմատիկ ամբողջությունը կարրուբատորը (ընդին ցրելու սարած), վորի համար պահանջ է նոր կառուցվածք ունեցողություն Δ ֆատուներ, իսկ ինքն առանձին, իր առանձնահատուկ ձևով, գծագրված է պատ. 2-ում ամբի մեծ մասշտաբով, բայց առանձնահատուկությունների մասին խոսք կլինի նկարագրության մեջ (ձևին մենք ծանոթ ենք զծ. 17-18):

Ահա սրանք են պատենտի գծագրերի գլխավոր ամենապարզ ձևերը:

յ. Սխեմաներ: Վերևում ուսումնասիրած գծագրերը, վորոնց կաբելի յե հաշվել առաջարկությունների ու դյուստարությունների արժանիքներ, բնորոշվում են նրանով, վոր, ինչպես տեսանք, սրանց միջից դուրս են հանված դյուստարի մտքի հետ կապ չունեցող մասերը և թողած են միայն ամենակարևորները:

Այդպիսի գծագրերը կոչվում են սխեմատիկ, այսինքն ամենապարզ պատկերներ, վորոնք ունեն միայն առարկա ի բնական ձևի մոտավոր նմանություն: Համենայն դեպս, զծ. 25 ից հեղուկյամբ կաբելի յե հասկանալի շոգեքարչը, զծ. 26-ից՝ կաթսայի սարքավորումը, իսկ զծ. զծ. 27, 28 և 29-ն ավելի մոտ են մեխանիզմների իսկական ձևերին: Հազվագյուտ չեն թե պատենտի և թե տեխնիկական այնպիսի գծագրեր, վորոնց վրա առարկաների պակեներն այնքան են պարզեցված, վոր իսկի նմանություն չունեն բնականի հետ: Այդպիսի պատկերները կոչվում են սխեմաներ:

Այդպիսի գծագրի որինակ կարող է ծառայել զծ. 31-ը: Այստեղ ներկայացված է ուղիղ-ընդունարանի սարքավորման սխե-



Գծագիր 31


ման, վորի բնույթը մենք չենք նկարագրում: Մեզ համար կարևոր է պարզել, վոր այս նկարը վոչ մի նմանություն չունի ուղիղ-ընդունարանի իսկական պատկերի հետ և առանց նկարագրության մինչև անգամ չի կարելի գուշակել, թե ինչ է այստեղ պատկերացված ու ինչպես է գործում այս սարքավորումը: Այսպիսի սխեմաները տեղին են այն ժամանակ, յերբ սարքավորումը բաղկացած է հանրաճանաչ մասերից ու սարածներից և պահանջվում է միայն պարզել սրանց դասավորումն ու միացումը: Որինակում բերած ա-

քաճները հայտնի պիտի լինեն ամեն մի ռադիո-սերտողի, ինչպիսին են՝ կոճը, կոնդենսատորը, կապողի լամպը և այլն:

Սրանց կառուցվածքն անհրաժեշտ չե ցույց տալ: Նույնպես անհրաժեշտ չե, թե ընդունարանի հավաքման դեպքում ինչպիսի՜ սեղմուկներ, մասնիկներ, շտեպսերներ և այլն մասեր են դորժած-ված: Նոր սարքավորման ու սրա առանձնահատկության բնույթը միայն մասերի միացման մեջ է: Դրա համար եւ սարքները բավա-կան են նշանակել բոլորի կողմից ընդունելություն դառնալ սյմանա-կան նշաններով, իսկ լարերով ցույց տալ սրանց միացումները:

Նման սխեմաները մեծ ծավալ են ստացել եւ կարող են ինչպիսի-յում:

Այս սխեմաները մեծ հարմարություններ են տալիս ջրանցք-ների շոգեխողովակներ և նման սարքավորման պատկերներ ներ-կայացնելու ասպարեկում, վորոնք բաղկացած են ստանդարտ կամ համեմատյան դեպս հանրաճանոթ մասերից: Այդպիսի որինակ մենք տեսանք դժ. 17-ում: Սխեմաներով հաճախ ոգտվում են տեխ-նիկայի ուրիշ ասպարեկներում, յեբը հնարավոր է պարզել վո-րեւե մեքենայի աշխատանքի սկզբունքը, վորտեղ մասերի կառուց-վածքը վոչ մի նշանակություն չունի: Որինակ, դժ. 32-ում ցույց



Դժադիր 32

տված սխեման պարզարանում և տանդեմ շոգեմեքենայի աշխա-տանքի սկզբունքը:

Ի հարկե, այդպիսի սխեմը վոչ մի նշանակություն չունի մե-քենայի բաղան ձեւի համար: Առանց նկարագրության չի կարելի մինչև անգամ վորոչեւ, թե այստեղ շոգեմեքենա յե ցույց տված, թե ներքին այրման շարժիչ, կամ վորեւե առանձնահատուկ ծծան:

Բայց սխեմաները լրիվ բավարարում են այն նպատակը, վորի համար դրանք գծված են, վորովհետեւ տվյալ սարքավորման նպա-տակն այն է, վոր 1 ու 2-րդ գլանները մի շարքի վրա դասավոր-ված չեն (ինչպես կոմպոսիցիոն մեքենաները), այլ մեկը մյուսի հե-տեւից, իսկ միացման իրար հետ կապված են մի ընդհանուր 3 ձողով ու աղբյուր են 4 շուռտվիկի վրա միասին: Այս է առա-ջարկության բնույթը, իսկ գլանների, կապարիչների, միացների, կրեյցկոպիների և այլն մասերի կառուցվածքները վոչ մի նշանա-կություն չունեն և մինչև անգամ պատենտի առարկա չեն հանդի-սանում:

Բացի պատենտի գծագրերի իմաստից, վորով՝ մինչև հիմա մենք դրադված եյինք, վոչ պակաս նշանակություն ունի և նրանց աբստրակտ տեսքը: Ի հարկե վոչ վոք գյուտարար-ց չի պահանջում, վոր նա լինի մասնագետ-գծագրող, բայց համեմատյան դեպս անհրա-ժեշտ է, վոր գյուտի կամ առաջարկության միտքը պարզաբանող չեշտ է, վոր գյուտի կամ առաջարկության միտքը պարզաբանող գծագրերը լինին պարզ, վորոչեւի և բարեխիղճ: Ճիշտ է, խորհըր-դային գյուտարարներն այս գործում դանդաղ են բացատրիկ բարե-լավ պայմաններում:

Բուրժուական յեթիկոններում վորոչ ձեւական՝ կանոններ չբա-վարարող գծագրերն ուղղակի չեն եւ քննվում և անմիջապես հետ են դարձվում, հաշվելով, վոր յեթե ինքը գյուտարարը գծագիր չի կարող պատրաստել, նա հնարավորություն կունենա իր ծախսով ուրիշին պատրաստել տալու:

Մեզնում գյուտարարությունը պետություն կողմից ամեն կերպ խրախուսվում է և յեթե գծագիրն ուղղելու կարիք կա, նա վերա-դադրվում ու փոփոխման է յենթարկվում հենց գյուտարարութ-ան գծագրում, այսինքն՝ պետական հաշվով: Պարզ է, վոր պետու-կոմիտեյում, այսինքն՝ պետական հաշվով: Պարզ է, վոր պետու-կոմիտեյում, այսինքն՝ պետական հաշվով: Պարզ է, վոր պետու-կոմիտեյում, այսինքն՝ պետական հաշվով: Պարզ է, վոր պետու-կոմիտեյում, այսինքն՝ պետական հաշվով:

Բայց բանը միայն այս չէ: Անհոգ և անմաքուր կատարած գծագիրը կարող է վնասել և իրեն՝ գյուտարարին և գնահղան թյու-րիմացությունների տեղիք տալով, կարող է գյուտարարի միտքն անհասկանալի դարձնել:

Այդպիսի մի որինակ մենք բերել ենք դրքի հենց սկզբում՝ դժ. 1-ում: Պարզ է՝ այդպիսի մի արդյունք դիպչում է գյուտա-րարի շահերին, ուստի և հարկավոր է գծագրի արտաք՝ն տեսքի վրա յեւ լուրջ ուշադրություն դարձնել:

Գծ. 1-ի նման գծագիր բոլորովին անթույլատրելի յե. մինչև անգամ յեթե գյուտարարի գծագրական անպատրաստականութ-ան վերաբերմամբ գիշող լինենք, կոմիտեյին այդպիսի գծագիր ներկա-յացնելը կարելի յե բացատրել միայն անհասկացողութամբ կամ վոչ յուրջ վերաբերմունքով:

Գծագիրը բարեխիղճ ու բավարար պատրաստելու համար մի քանի գործիքներ ու նյութեր են պետք:

Թուղթ և կոլկա: Տուչով գծագրելու դեպքում թղթի վո-րակը շատ մեծ նշանակություն ունի, վատ թղթի վրա տուչը ծո-րում է և պարզ գծեր չի տալիս, այդ պատճառով եւ չի կարելի մաքուր գծագրեր պատրաստել: Թղթի յե այժմյան տեսակներ-ից տուչի աշխատանքի համար պիտա՜ի յե միայն այսպիս կոչված «վատ մանի» թուղթը (ուստական «վատման»): Այդ շատ խիտ ու սպիտակ

Թուղթ և և ծախվում է թերթերով կամ ուղիներով, վորից կարելի չէ կտրել այնքան, ինչքան պահանջում է գծագրի չափը:


Գծագրերից պատճենն հանելու համար դորձածում են այսպես կոչված «կաշկա»-ն (մոմած թուղթ), այսինքն հատուկ ձևով պատրաստած թափանցիկ թուղթ:

11. Տուշ: Պատենտի գծագրերը պատրաստում են անպայման սև տուշով, վոր ծախվում է չշերով, հեղուկ դրուժյամբ: Զի թուղթատրվում գծել թանաքով, կամ դունավոր տուշով. չի կարել նույնպես գծագրերը ներկել:

12. Յեռանկյունի և քանոն: Ուղիղ գծեր անցկացնելու համար ոգտվում են քանոնով կամ գծագրական յեռանկյունիով. վերջինով գծում են և ուղիղ անկյուն (վորովհետև այդ յեռանկյան մի անկյունը հավասար է 90°):

13. Ռեյսֆեդեր և կարկիմ: Ռեյսֆեդերը կամ գծագրական դրեչը ծառայում է տուշով ուղիղ գծեր գծելու համար:

Սրա գլխավոր մասը բաղկացած է պտուտակով ձգված յերկու տափակ ծայրերից (նկ. 33):



Գծագիր 33

Պտուտակով այդ պտուտակներ, վորով մոտեցնում կամ հեռացնում ենք ռեյսֆեդերի ծայրերը, փոփոխություն ենք յենթարկում ծայրերի միջև տարածությունը, հետևապես կտրող են գծել բարակ կամ հաստ գծեր: Այդ յերկու ծայրերի մեջ ածում են մի քանի կաթիլ տուշ:

Կարկինը դորձածում են շրջագծեր և ուղիղներ գծելու համար: Սրա մի վտաի վրա ամրացված է ասեղ, վոր դրվում է շրջագծի կենտրոնում, իսկ մյուս վտում հագցված է մատիտի մի փոքրիկ միջուկ, կամ տուշի համար չրջանի ռեյսֆեդեր:

Ռեյսֆեդերն ու չրջանի դրեչը տուշով լցնում են այնպես, ինչպես ցույց է տված դժ. 33-ում, այսինքն՝ ռեյսֆեդերը չի կարելի ուղղակի կոխել տուշով և՛ վեր չի մեջ, այլ սրտք է մի մաքուր հասարակ գրչով, ապակու կամ պինդ թղթի փոքրիկ շերտով, կամ թե մի այլ միջոցով մի քանի կաթիլ տուշ ածել ռեյսֆեդերի յերկու ծայրերի մեջ:

Ռեյսֆեդերն աշխատանքի ժամանակ պետք է բռնել թղթին համարյա թե ուղղահայաց, մի փոքր էլ թեք դեպի իրեն, վորպեսզի տուշը քանոնի տակ չլցվի: Գիծը հարկավոր է սկսել ձախից և ռեյսֆեդերը յերեք մատով բռնած՝ դնալ դեպի աջ, իսկ ճկույթով

պետք է քանոնը սեղմել: Կարկինով աշխատելու դեպքում անհրաժեշտ է մի ձեռքով բռնել անպայման սրա գլխից, իսկ տուշով շրջագծեր գծելիս հարկավոր է դիժը տանել անընդհատ ու մի ուղղությամբ (ժամացույցի սլաքի ուղղությամբ) և վոր մի դեպքում՝ արդեն դժած գծի հակառակ ուղղությամբ: Անհրաժեշտ վարժույթյունները կարելի չէ շատ հեշտ և արագ բմբռնել մի քանի աշխատանքներից հետո:

14. Գծագիր պատրաստելու կարգը: Նախորդ գծագրերը պատրաստում են թղթի վրա մատիտով և այս աշխատանքի համար դորձածում են միջին սնդուկյուն ունեցող մատիտ (համար 2 կամ 3): Մատիտը պետք է սրել և աշխատանքի ժամանակ բթանալու դեպքում միշտ սուր պահել: Անհրաժեշտ է նուրբ գծել ու շատ չսեղծել թղթին:

Միայն ու ոժանդակ գծերը պետք է ջնջել փափուկ ունեղնով (այս նպատակի համար թանաքի ունեղնն անպետք է):

Յերբ գծագիրը պատրաստած է մատիտով, սկսում են այդ գծերի վրայով ռեյսֆեդերի կամ կարկինի ուղեւթյամբ տուշի գծեր տանել: Վերջին դեպքում անհրաժեշտ է պաշտպանել հետևյալ հերթականությունը՝ ամենից առաջ հարկավոր է գծել բոլոր չրջագծերն ու աղեղները, հետո, սկսած գծագրի վերելից, հորիզոնական գծերը, ապա ուղղահայաց ու վերջապես թեք գծերը, իսկ տուշը չորանալուն չսպասելու համար՝ քանոնը պետք է շարժել միշտ մի ուղղությամբ:

Գծագրի պարզությունն ու արտահայտիչ լինելը բավականին շափով կախված են գծերի հաստատությունից. դրա համար էլ գծագիրը պետք է բարակ գծերով գծել:

Առարկայի հարթապատկերների յերևացող գծերը պետք է տանել ավելի հաստ (գծի հաստությունը անել $\frac{1}{2}$ -1 մմ), միահավասար ու անընդհատ, իսկ չերևացող գծերը՝ կետագծերով ու յերկու անգամ բարակ, քան հաստ գծերը:

Կետագծերը շատ կարճ չպետք է լինեն, մոտավորապես 3-4 մմ, իսկ միջի տարածությունները մոտավորապես 1 մմ: Ստվերագծեր և մասերի թվերի կամ տառերի գծերը պետք է ցույց տալ ավելի բարակ, մոտավորապես յերեք անգամ բարակ, քան չրջապատի յեռևացող գծերը:

Գծագրի վրա առանձին ուշադրություն ու մաքրություն են պահանջում զանազան կոր գծերը, այսինքն այն տեղերը, վորտեղ առիղ գծերը միանում են չրջագծայինների հետ:

Գժ. 34 ու 35-ի վրա ցույց են տված, թե ինչպես պետք է վարվել այդպիսի դեպքերում:

Գժ. 34-ի վրա շառավղով աղեղի հետ միացող յերկու ու-

զից գծերը կազմում են ուղիղ անկյուն: Աղեղի կենտրոնը գտնելու համար պետք է գծերը շարունակել մինչև իրենց հատման կետը, այդ կետից ուղիղ անկյան կողմերի վրա չափել շառավղի չափով հատվածներ, ստացած կետերից բարձրացնել ուղղահայացներ, որանց հատման կետը կլինի վորոնների կենտրոնը:

Կատանանք հարթ միացում ուղիղի հետ՝ առանց ջարդվածքների:


Գծ. 35-ի վրա ուղիղ գծերը կազմում են սուր անկյուն:

Յեթե այդ կենտրոնից տված շառավղով (r) գծենք աղեղը:


Այս դեպքում կոր գծի կենտրոնը գտնելու համար պետք է անկյան կողմերին անցկացնել r հեռավորություն վրա զուգահեռ յերկու ուղիղ գծեր (գծագրի վրա ցույց են տված կետագծերով):

Այդ յերկու գծերի հատման կետը կլինի վորոնների կենտրոնը: Նույն կերպ են վարվում և բութ անկյան դեպքում:

15. Ընդարկնալուրը կալկայի վրա: Գծագրերից պատճեն հանելու դեպքում դործածում են կալկան: Սրան դնում են գծագրի վրա, ծայրերը պնդալցնում են սեղանի վրա, հետո կալկայից յերևացող գծերը տուչով գծում են այնպես, ինչպես գծում էլին թղ:



Գծագիր 34



Գծագիր 35

թի վրա: Տուչը կալկայի վրա լավ նստելու համար պետք է կալկայի յերեսը կալի մի ուղի քսել (ատամի մի ուղի):

16. Մակագրեր: Գծագրի վրայի բոլոր մակագրերն ու թվերը գրված պիտի լինեն մաքուր, պարզ և խնամքով: Մակագրերի ու թվերի համար դործածում են գծ. 36-ում ցույց տված ձևը, այսինքն՝ տառերն ու թվերը ձևագրի ձևով գրելու փոխարեն հարկավոր է տպածն գրել:

Թվերն ու տառերը մանր չափի լինեն, պետք է ունենան մասշտաբային 5 մմ բարձրություն: Այս անհրաժեշտ է, վորովհետև պատենտի գծագիրը հրատարակելու և գրողներ պատրաստելու համար հանում են գծագրի լուսանկարը: Լուսանկարելու դեպքում գծագրի չափերը մի կամ ավելի անգամ փոքրանում են: Իհարկե նույնքան անգամ կփոքրանան թե տառերը, թե թվերը: Այդ պատ-

ճառով դրանք կարող են դուրս գալ շատ փոքր ու անընթեռնելի, յեթե վաղորդը այդ հանգամանքն աչքի առաջ չունենալ:

Պատենտի գծագրերի վրա մակագրերի քանակը բավականին սահմանափակ է: Գծագրի աջ կողմը վորևե անկյունում գրում են հայտ ինչ մարդու հայտարարը՝ «աղգանուհը (к заявке такого то)», հետո գծագրի վրա մի քանի պատկերներ լինելու դեպքում ավելի մեկի վերևը գրում են՝ պատկեր 1-ին, պատկեր 2-րդ և այլն:

Ուրիշ վոչ մի մակագիր չպիտի լինի, որինաղ՝ «Տեսք առաջից» «Տեսք վերևից» «Կտրվածք» ԱԾ-ով» և այլն:

Այդպիսի սահմանափակ թվով մակագրեր մաքուր գրելու համար այնքան ել ժամանակ էլն խլում: Այդ մակագրերը պարզ, մա-

АБВГДЕЖЗИКЛМ
НОПРСТУФХЦЧ
ШЩЫЬЭЮЯ
1234567890 №

Գծագիր 36

քուր ու միահավասար գրելու համար, հարկավոր է մատիտով գծել 5 մմ. իրարից հեռու յերկու զուգահեռ գծեր ու մի քանի հատ ել զուգահեռների հետ հատվող 75° թեք գծեր՝ տառերին միատեսակ թեքություն տալու համար, հետո մատիտով դուրս բերել ամեն մի տառն ու սրանց մեջ հավասար տարածություն պահպանել և վերջապես տուչի դրչով կամ ուսփեղեքով միևնույն հաստությամբ գծել (գծ. 37):

Նկարագրություն մեջ հիշված մասերը գծագրի վրա նշանակում են թվերով, ինչպես մենք տեսանք մի շարք սրինալներում: Այդ թվերը նույն գծերը պետք է անցկացնել բարակ, ավելի լավ է կոր գծերով, այն ել ձևով, վորովհետև այդպես ավելի չուտ են աչքի ընկնում ու զանազանում գծագրի մյուս գծերից, իսկ թվերը չպետք է առնել շրջանակների մեջ, ինչպես բանվորական գծագրերում են անում:


Գծագրեր վրա փոքրաթիվ մասերը թվերով նշելու դեպքում ժառանգողը գծերի դասավորումը վոչ մի նշանակություն չունի, իսկ մասերը մեծաքանակ դեպքում բավականին դժվար է նկարագրությունը կարդալ և միևնույն ժամանակ գծագրի վրա համապատասխան մասի համարը գտնել, յեթե այդ համարները խառն են

К ЗАЯВКЕ Н И ПЕТРОВА
ФИГ. 1 ФИГ. 2

Գծագիր 37

դասավորված։ Այդպիսի դեպքերում կարելի չէ առաջարկել այն ձևեր, վոր ցույց է տված գծ. 38-ի վրա։

Այս ձևի ելությունն այն է, վոր մասերի համարները գրված են առարկայի շրջապատի գծերից բավական հեռու ու դասավորված են կարգով։ Առարկայի մասերը նույն համարի գծերը թեք պետի լինեն ու իրար դուգահեռ։ Պատահում են դեպքեր, յերբ ուղիղ



Գծագիր 38

գծով անհնարին է նշել առարկայի վորևէ մասը, դրա համարադիմը վերջում կարելի չէ բեկել։


Թվերի այսպիսի դասավորումն զգալի կերպով հեշտացնում է գծագրի կարդալը։

Այս տեսակի դասավորման միակ պահանջությունը բավականին մեծ տեղեւ բռնելն է։

VI. ՊԱՏԵՆՏԻ ԳԾԱԳՐԻ ԶԵՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Մի քանի ձևական պահանջների, վոր վերաբերվում են պատենտի գծագրերին ու պահանջվում են գյուտարարության կոմիտեյի կողմից, մենք ծանոթացանք նախորդ գլխում, հիմա այդ կանոնների ամփոփումը կարեւոր պարզաբանումներով և որինակներով։

17. Գծագրերի չափերը։ Գյուտարարության կոմիտեյին գծագրեր ներկայացնելու համար սահմանված է թղթի կայուն մեծություն՝ 297 մմ. × 210 մմ. (կամ 30 սմ. × 21 սմ.), կարեւոր դեպքում թույլատրվում է կրկնակի չափեր, այսինքն՝ 297 մմ. × 420 մմ. (կամ 30 սմ. × 42 սմ.), վոր կարելի լինի ծավել և ստանալ նույն կայուն չափը։ Այս չափերը վերաբերում են միմիայն թղթի չափերին, վորի վրա գծած է գծագիրը, իսկ գծագրի մակերեսը մի քիչ



Գծագիր 39

փոքր պլտի լինի, վորովհետեւ թղթի չորս կողմից պլտի լինեն մաս 30 մմ. լայնությամբ լուսանցքներ, ձախ լուսանցքը կարելի չէ հասցնել մինչև 40 մմ., վորը հնարավորություն է տալիս բոլորողներ, այլումներ և այլն կազմելու։ Գծագրերը կազմելուց առաջ հարկավոր է մատիտով նախագծել սրա մակերեսը՝ ուղղանկյան շրջանակի ձևով ու մասերի պատկերները դասավորելու ժամանակ դուրս չգալ այդ շրջանակի սահմաններից (գծ. 39)։

Գծագրերը պատրաստելուց հետո այդ շրջանակի՝ մատիտով քաշած գծերը պետք է ջնջել, վորովհետեւ պատենտի գծագրի վրա վոչ մի շրջանակ չի թույլատրվում։


Յերկար առարկաների պատկերները գծագրի սահմաններից դուրս չգալու և մասշտաբը չփոքրացնելու համար ողջովում են այսպես կոչված «կտրվածք»-ի ձևով, այսինքն՝ առարկան պատկերացնում են կտրծես թե մի քանի տեղում կտրված, ընդհատած

և դուրս դրած այն մասերը, վորոնք վոչ մի նշանակութուն չունեն:

Այս ձևը պարզաբանված է դժ. 40-ի վրա, վորտեղ 1 պատկերում ցույց է տված յերկար զըննով մի տրանսմիսիա, վորի ծայրերըր նստած են յերկու առանցքակահների վրա:

Վերոպէստե տրանսիլիւսի գլանն իր ամբողջ յերկարութեամբ
 փխտեսալ ե ու սլարդարանման վոչ մի կարիք չունի, այլ
 իւրաճառով դժադրի չափերը կրճատելու համար գլանի մեջտեղի
 մասը դուրս ե գցած, վորը չի խանգարում դժադրի սլարդութեան:

Կտրվածքների տեղերի ձևերը դանազան կերպ են զժադրում, նայած իրանք ինչ բնութայնական կտրվածքներ ունեն՝ մետաղյա կտր առաքականորդ նշանակվում են կտրած, ստվերադժած հան-




հակառակ դեպքում նկարագրությունն անհասկանալի կլինի: Պայ-
կայի վրա թվերը, համարները և մակագրերը մաքուր ու պարզ
գույն բերելու համար անհրաժեշտ է «համր» որինակի վրա նշա-
նակել մատիտով, իսկ վերջացնելուց հետո ջնջել ուսմանով:

Մակագրերի ու թվերի մեծություն մասին տես § 16:

19. Պատենտի գծագրերի մյուս առանձնահատկությունները:
Մրանց մասին մենք արդեն խոսել ենք զրքի համապատասխան
մասերում: Համառոտ կերպով վերհիշենք այդ:

1. Հարթապատկերների դասավորումը չի յենթարկվում տեխ-
նիկական գծագրության կանոններին, հարթապատկերները կարող
են ազատ դասավորված լինել: Հարթապատկերների քանակն այս-
պես է, քան տեխնիկական գծագրերի վրա (§ 4):



Գծադիր 42

2. Մասշտաբ պահպանելը պարտադիր չէ և ցույց չի տրվում
գծագրի վրա (§ 5):

3. Մանրամասն բանվորական գծագրերն անպետք են կոմիտեի
համար:


Պատենտի գծագիրը պիտի պատկերացնի առաջարկվող մեխա-
նիզմը հավաքած դիրքով (§ 7):

Պատենտի գծագրերի վրա չափերը ցույց չեն տրվում, նույն-
պես չեն գծվում կենտրոնների և առանցքների դեմը, վորոնք պար-
տադիր են տեխնիկական գծագրերի վրա:


Բոլոր ասածներն ամփոփելու և հիշված կանոններին պարզ
պատկերացում տալու համար, հետադրուենք և համեմատենք գծ-
գծ. 42, 43 և 44:

Գծ. 42-ը մի տեխնիկական գծագիր է՝ իր բոլոր կանոններով,
բայց միևնույն ժամանակ, մեր կարծիքով, բոլորովին անբավա-
րար պատկերող գծագրի համար, վորովհետև այստեղ խախտված են
համարյա բոլոր կանոնները, վորոնք սահմանված են պատենտի
գծագրերի նկատմամբ՝ ցույց են տված գծագրած առարկայի անու-
նը, կան մի քանի պարզաբանող մակագրեր, նշանակած և մասշտա-
բը, դրված են չափերը, գծած են առանցքները և վորոնք անցքերի
կենտրոնների շրջագծեր:

Նույն առարկայի պատենտի գծագրի պահանջները բավարարող
հիշատակները տված է գծ. 43-ի ու 44-ի վրա. առաջինը «համր»
և ու գծագրած պիտի լինի թղթի վրա, յերկրորդն առաջինի պատ-



Գծադիր 43



Գծադիր 44

հենն և կալիայի վրա ու դանդաղանվում և նրանից իր թվերով ու մա-
կագրերով: Մյուս բոլոր մակագրերը, վորոնք կան գծ. 42-ի վրա,
նույնպես և չափերը, առանցքի ու կենտրոնի դեմըն այստեղ չկան:

20. Գյուտի նկարագրությունը: Ինչպես մենք արդեն ասել ենք,
պատենտի գծագիրը կազմում է գյուտի նկարագրության գլխավոր
մասերից մեկն ու սերտ կապ ունի գրավոր նկարագրության հետ,
այդ պատճառով անհրաժեշտ է կանգ առնել և սրա վրա, թեպետ
այդ մեք թեմայի սահմաններից դուրս է:

Մանրամասն նկարագրության մասը կազմելու կանոններին
ու սրա բովանդակության մի վորոշ որինակի վրա:

Վերջենք ջրմուղի ծորակի նկարագրությունը, վորը ցույց էր

տված գծ. 29-ում: Նկարագրութիւնն այս դեպքում պիտի կարգ-
ված լինի հետեյալ կերպ. պտուտակային փակման չափնդէլ ունե-
ցող ջրի ծորակի նկարագրութիւնը:

Ներածական մաս

Հայտնի յեն այնպիսի Պտուտակային փակման չափնդէլ ունե-
ցող ջրի ծորակներ, վորոնց խտացման տափողակը (չայրա)
նստած է աղատ:

Այս տեսակ ծորակները բացասական կողմն այն է, վոր ծորակը
փակելու ժամանակ տափողակը տեղահան է լինում ու պինդ է
փակում: Առաջարկված ծորակի կառուցվածքը նախատակ ունի
տափողակի այդ տեղահանումը վերադնել և առաջ բերել պինդ
փակում, վոր ստացված է, բայց առաջարկութեան, փակման
չափնդէլի վրա առանձին ծայրոց չինելով:

Գծագրի վրա ծորակը ցույց է տված կտրված ու փակ դիրքով:
Պտուտակային տափողակը (2) աղատ դրված է պտուտակի փակ-
ման չափնդէլի (3) տակը և այդպիսով չափնդէլի քանդամն
դեպքում վեր է բարձրանում միայն ջրի ճնշման ազդեցութեան
տակ, իսկ չափնդէլի (3) իջնումն դեպքում՝ սեղմվում է իր
թամբի (4) վրա:

Առաջարկութեան շնորհիվ փակման չափնդէլի (3) ունի կոնսա-
նստում (1), վոր անցնում է տափողակի (2) միջով:
Այդ ծայրոցը չի թողնում, վոր տափողակն (2) իր տեղից
չարժի ու այդպիսով ապահովում է ծորակի պինդ փակումը:
Պտուտակային տափողակ: Պտուտակային փակման չափնդէլով,
սեղմված կտրվարիչով ու խտացնող աղատ տափողակ

ունեցող ջրի ծորակի առանձնահատկութիւնն այն է, վոր տափո-
ղակի (2) տեղահանումը վերացնելու պատճառով փակման չափն-
դէլն (3) իր ծայրում ունի տափողակի (2) միջից անցնող մի ծայ-
րոց (4):

Այս որինակից մենք տեսնում ենք, վոր ընդհանրապես նկա-
րագրութիւնը կարելի չէ բաժանել մի քանի բաժին՝ դուռի կամ
առաջարկութեան անուն, ներածական մաս, առաջարկութեան
բնութիւնի նկարագրութիւն, պատկերի առարկան:
Անցնենք այդ բաժինների մանրամասն քննութեանը:

Գ յ ու տ ի ա ու ջ ա ռ կ ու թ յ ա ն ա ն ու ճ ը:
Գյուտի կամ առաջարկութեան անունը պիտի լինի այնքան պարզ ու
լրիվ, վոր կարելի լինի իսկույն վորոշել, թե տեխնիկայի վոր
բաժինն է պատկանում առաջարկութիւնը: Այս հարկավոր է ա-
մենից առաջ նրա համար, վոր գյուտարարութեան կոմիտեի գրա-
ռենյակը չիորոշած ու լրիվ չկարգացած առաջարկութեան նկա-
րագրութիւնը հանձնի համապատասխան մասնագետի եկապե-
րագրութիւնը համար: Բացի այս, պարզ ու լրիվ վերնագրերն ունի մեծ
տիպայի համար: Բացի այս, պարզ ու լրիվ վերնագրերն ունի մեծ

նշանակութիւն և այն դեպքում, յերբ պատենտը հրատարակվում
է մամուլի մեջ, և այս հանգամանքը հնարավորութիւն է տալիս
պատենտով հետաքրքրվողներին շուտ գտնելու իրեն հետաքրքրող
առարկան:

Ուրեմն, այս պատճառներից դուրս, սխալ կլիներ այս ա-
ռաջարկութիւնն անվանել միայն «ծորակ» դառնով: Այս պարզ չէր
լինի, քանի վոր կան դանաղան ծորակներ՝ հեղուկի և դաշի:

Ջրի ծորակ անվանումը վերացնում է այդ անորոշութիւնը
և պարզարանում է, վոր առաջարկութիւնը վերաբերում է միայն
ջրի ծորակներին: Բայց ջրի ծորակներն էլ կարող են լինել դանաղան
կառուցվածքի: Այստեղ առաջարկութիւնը վերաբերում է վոր
ընդհանրապես բոլոր ջրի ծորակներին, այլ միայն սրանց վորոշ տե-
սակին, այն է՝ «պտուտակային փակման չափնդէլով» ծորակներին:
Դրա համար այդ հատկանիշն էլ պիտի հիշվի վերնագրի մեջ: Վեր-
նագրի կարելի չէ ավելի պարզարանել, յետեւ ավելացվեն մի քանի
«բառեր» պտուտակային փակման չափնդէլ և տեխնաձև կախարչ
«ծորակ», վորովհետեւ առաջարկութիւնը չի վերաբերում
այն ծորակներին, վորոնք նույնպես ունեն պտուտակային չափնդէլ,
բայց կախարչներն ուրիշ ձև ունեն, որինակ՝ դնդաձև:

Իներենք առաջարկութիւնների մի քանի անունների որինակներ:
«Տրամվայի վագոնի նախապահպանման ցանց» — չէր կարելի
տեղ միայն «ցանց», կամ «նախապահպանման ցանց», վորովհետեւ
այդպիսի անվանումը կլինէր անորոշ. նախապահպանման ցանցերը
գործածվում են տեխնիկայի դանաղան շրջաններում:

«Տրամվայի վագոնի» լրացուցիչ բառերը վերնագրին տալիս են
անհրաժեշտ պարզութիւն:

«Հեռագրի գերանների համար փոսեր փորելու հարմարութիւն»,
«գծի վրա շարած չափները շարժելու սարած»: «Յերկու խումբ
աւանդ անվաճիւր շողեքար»: Այս բոլոր արինակներում չէր կարելի
առհասանախափել միայն կրճատ անուններով, վորովհետեւ պար-
զութեանն ու ճշտութեանը վնաս հասցրած կլինէին:

Յետեւ առաջարկութիւնը վերաբերում է արդեն պատենտի համարը:
«Պտուտակային փակման չափնդէլով» վերնագրի համարը:
Ուրեմն, վերնագրերը կազմելիս պետք է ձգտել՝ լինջքան կարե-
լի չէ ճիշտ վորոշել տեխնիկայի այն բաժինը և այն առարկաների
խումբը, վորին պատկանում է տվյալ գյուտը կամ առաջարկու-
թիւնը:

Անվան մեջ չափի ցույց տալ գյուտի կամ առաջարկութեան
նորութիւն և առանձնահատկութեան իմաստը (դրա մասին կհիշվի
նկարագրութեան մեջ): Որինակ, սխալ կլինէր անվանել «Պտու-
տակային փակման չափնդէլով»:

տառաչին փակման չափնդելի վրա կոնաձև ծայրոց ունեցող ջրի ծո-
րակ», վորովհետև յենթադրվում է, վոր այդպիսի կոնաձև ծայրոց
ունեցող ծորակը դեռ տեխնիկային հայտնի չէ:

Ն ե ր ա ծ ա կ ա ն մ ա ս : Ներածական մասի գլխավոր
նշանակութունը գյուտի կամ առաջարկության նպատակը և ի-
մաստը ցույց տալն է: Արտադրական նշանակութուն չունեցող
աննպատակ և անողուտ գյուտերն ու առաջարկությունները պատեն-
աի յենթակա չեն: Գյուտի և առաջարկությունների նպատակը բավա-
կան պարզերու և համոզիչ դարձնելու համար, բնական է, վոր
պետք է սկսել գյուտութուն ունեցող նման կառուցվածքների ցուց-
մունքներից («Հայտնի յեն այսպիսի ջրի ծորակներ»...), հետո
նշել սրանց բացասական կողմերը կամ անհարմարությունները
(«Այս տեսակ ծորակները բացասական կողմն աչն է, վոր»...),
սրանից հետո տրամաբանությունն ստիպում է անցնել գյուտի կամ
առաջարկության իմաստին, վորը վերացնում է վերոհիշյալ բա-
ցասական կողմերը:

(«Առաջարկած ծորակի կառուցվածքը նպատակ ունի վերաց-
նելու»...) և այլն:

Սրանով վերջանում է նկարագրության ներածական մասը:
Անհրաժեշտ է նկատել, վոր այս տեսակ կազմած ներածական մասը
վոչ թե միայն ոգնում է գյուտի կամ առաջարկության նշանակու-
թյանը և գնահատմանը, այլ և վորոշ չափով բարձրացնում է գյու-
տարարի հեղինակությունը:

Յեւ իսկապես, թանգարժեք գյուտերը միշտ հիմնված են գյու-
տութուն ունեցող առարկաների կառուցվածքների բացասական
կողմերի հիմնական ուսումնասիրության վրա, իսկ յենթե գյուտա-
բարը ցույց չի տալիս, վոր իրան հայտնի յե այս ինչ մեքենան իր
այս ինչ թերություններով, այս հանգամանքն իսկույն յերևան է
հանում, վոր նա տեխնիկայի տվյալ բաժնից թույլ պատրաստակա-
նութուն ունի, գործին լուրջ վերաբերմունք չի ունեցել ու հնա-
րել է, ինչպես ասում են՝ «յա բախտ»:

Ի ս կ ա կ ա ն ն կ ա ր ա դ ր ու թ յ ու ն : Այս կարելի չի
բաժանել յերկու մասի:

Սկզբում պարզաբանվում են դժագրի նկարները, առաջագիւ-
թյան կառուցվածքը և մեխանիզմի գործողությունը:

Իսկ յերկրորդ մասում («առաջարկության չնորհիվ»...) խոս-
վում է գյուտի կամ առաջարկության նորությունների մասին, — վորն
է կառուցվածքի ինքնուրույնությունը, սրա տարբերությունները,
մի խոսքով գյուտի «ծուծը»:

Նկարագրությունն անպայման պետք է հիմնվի գծագրում
նշված թվերի վրա, այսինքն՝ ամեն մի մասի անունը լրացվում է
գծագրի վրա նշանակված համարով, որինակ, չի կարելի գրել միայն
«չափնդել», «տափողակ», «կափարիչ» և այլն, պետք է գրել՝ «չափն

դել 3», «տափողակ 2», «կափարիչ 4» և այլն: Մասի անունի
համար պետք է դնել անմիջապես անունից հետո, որինակ՝ չի կա-
րելի գրել «գաղ ներս թողնելու կափարիչ համար 5», այլ պետք է
գրել «կափարիչ 5—գաղ ներս թողնելու համար»:

Այս նկարագրությունները, վորոնք չեն հիմնվում գծագրի մեջ
նշանադրած թվերի վրա, հաշվվում են անբավարար, վորովհետև քիչ
թե շատ բարդ կառուցվածքների դեպքում նկարագրության յուրա-
ցումն անհնարին կլիներ: Նկարագրության մեջ չհիշված մասերը
գծագրի վրա չպետք է թվերով նշանակված լինեն: Սրանից բղխում
է այսպիսի մի գործնական կանոն՝ գծագրի վրա թվեր չդնել միջև
նկարագրության կազմելը, վորովհետև վերջինը կազմելիս կարելի
կլինի պարզել, թե սարքավորումը պարզաբանելու ու մեխանիզմի
գործելու համար վոր մասը պետք է հիշել նկարագրության մեջ:

Պ ա տ ե ն տ ի ա ու ա ր կ ա ն : Պատենտի առարկա կամ
«պատենտի ֆորմուլ» կոչվում է գյուտի բնույթի ու տեխնիկական
իմաստի կարճառոտ բացատրությունը: Հեղինակն այստեղ պետք
է ցույց տա, թե ի՞նչն է հաշվում տվյալ կառուցվածքի նորությունը, վա-
րով դանադանվում է գյուտի յուն ունեցող կառուցվածքներից
ու ի՞նչ մասի համար կցանկանալու ստանալ հեղինակի իրավունք:

Որինակ, վերևում հիշված դեպքում գյուտարարն իհարկե չի
կարող պահանջել, վոր իր վրա հաստատվի ամեն տեսակի ջրի
ծորակները կառուցվածքների հորինումը, այլ իրավունք ունի նա
պահանջել միայն մի յորոշ ծորակի կառուցվածքի վերաբերմամբ,
վորն ունի այս ինչ առանձնահատկությունները:

Բերմամբ, վորն ունի այս ինչ առանձնահատկությունները:

Հենց կառուցվածքի այդ առանձնահատկությունները պետք է
լինեն հեղինակի պատենտի առարկան:

Պատենտի ֆորմուլի բովանդակությունը բաժանվում է յերկու
մասի, միսրոնց կապում է «դանադանվում է» բառը: Առաջի մասում
խոսվում է հենց գյուտի մանրամասն անվանման մասին («պտու-
տակային չափնդել, ափսեաձև կափարիչ ու խտացման տափողակ
ունեցող ջրի ծորակ»...):

Այս մասը վորոշում է, թե գյուտը տեխնիկայի վոր բաժնին է
պատկանում ու իր մեջ վոչ մի նորություն չի պարունակում:

Յերկրորդ մասն սկսվում է «դանադանվում է» բառով: Արդեն
այդ բառը պարզում է, վոր սրանից հետո հարկավոր է թվել գյու-
տի կառուցվածքի նորությունը և առանձնահատկությունը (...դանա-
դանվում է խտացման տափողակով՝ 2, տեղահանման վերացումով՝
չափնդել 3, իր վերջում ունի մի ծայրոց՝ 1, վոր անցնում է տափո-
ղակ 2-ի միջից):

Այսպիսով հեղինակի գյուտի նպատակն ու իմաստը ճիշտ ու
լրիվ է նկարագրված: Յեթն գյուտը պարունակում է իր մեջ կա-
ռուցվածքի մի քանի նորություն ու կատարելագործություններ, այդ

դեպքում պատենտի ֆորմուլն եւ պիտի ունենա համապատասխան կետեր: Որինակ, գծ. 26-ում ցույց տված տապի խողովակներ ունեցող կաթսայի կառարեւադրման պատենտի ֆորմուլ կարելի չէ այսպէս նկարագրել:

«Պատենտի առարկան 1. Տապի խողովակներ ունեցող շոգեկաթսան դանդաղանվում է նրանով, վոր հնոցի ցանցի ծայրում տապի խողովակներն ու կաթսայի պատերում շինված են անցքեր, վորոնց մեջ մտնելով թափելու համար շտուցեր եւ մտցրած:

2. կետ 1. նշած կաթսայի պատրաստման ձևը դանդաղանվում է նրանով, վոր մեխանիկական շղթայածէ ցանցը դործածելու դեպքում այդ ցանցն աչց եւ կացրած շտուցերի միջեւ եւ անցնում է կաթսայի ներքեւից:

Պետք ե նկատել, վոր մասերի, նյութերի ու չափերի համար պատենտ չեն տալիս եւ այդ պատճառով եւ հարկավոր չէ դրանց մասին հիշել պատենտի ֆորմուլի մեջ: Որինակ, սխալ կլինէր գրել՝ «պատենտական շալինգ» 3. վորի ծայրում շինված ե յերկս թե ծայրոց 1, յերկարութեամբ 15 մմ. ու 6 մմ տրամագծով»: Այսպիսի ձևակերպումը հեղինակի իրավունքները բավականաչափ կաճաճանափակի, վորովհետեւ այդպիսի պատենտի փոխարեն շատ հեշտ կարելի կլինի վերցնել մի ուրիշը, յիթե ծայրոցը շինվի վոչ թե յերկաթից, ալ, որինակ, պղնձից, իսկ չափերն եւ փոխվեն:

Վերջում մի քանի խոսք ասենք նկարագրութեան արտաքին ձևի մասին: Չպետք ե մոռանալ, վոր նկարագրութեանը դործնական մի փաստաթուղթ ե, հետևապէս պահանջում է դեպի իրան լուրջ ե խիստ վերաբերմունք: Չի կարելի նկարագրութեանը ներկայացնել թղթի կտորների վրա, գրել մատիտով, դանդաղան ջնջումներով, ուղղումներով ե այլն: Պետք ե արտագրել թանաքով, սպիտակ թղթի վրա, բավականին պարզ ու մաքուր, վոր կարգաւս վոչ մի թյուրիմացութեան կամ մուծ ե անհասկանալի լինելու առիթ չլինի: Փհարկե, ամելի ցանկալի կլինի տպել տպող մեքենայով: Սրանք մեծ ծախս չեն պահանջում ե շատ ժամանակ ել չեն խլում:

Համենայն դեպս, ձեռնուռ յե ամելորդ մի կես ժամ ծախսել, վոր նկարագրութեանը մաքուր ու գլուրընթեռնելի լինի, քանի վոր գլուրի վրա գուցե թե շատ ժամանակ ե թե մեծ աշխատանք ե ծախսված:

Վ. ԳՅՈՒՏԻ ՆԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՈԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՅՆԵՐ.


21. Տեխնիկական գծագիր: Գրքի սկզբում նկարագրված հարթապատկերների ձևը այն դիտավոր ու հիմնական միջոցն ե, վոր ընդունված ե տեխնիկական գծագրութեան մէջ:

Այս հարթապատկերի ձևը, բացի իր բոլոր առավելութիւններից, ունի ե մի պակասութիւն՝ չունի իսկույնէթ հասկանալու


պարզութիւն: Այս ձևի գծագրերն ըմբռնելու, հասկանալու ե պատկերացնելու համար պահանջվում ե լարված ուշադրութիւն: Մի հարթապատկերով ընդհանրապէս չի կարելի պարզ պատկերացնել առարկայի ձևը (առանց բանալոր պարզաբանումների)՝ այլ, յերբ տված են մի քանի հարթապատկերներ, անհրաժեշտ ե վորոշ լարված յերեակայութիւն, մի հարթապատկերը մյուսի հետ կապելու ե առարկայի ձևը տարածութեան մեջ պատկերացնելու համար: Այս պակասութիւնը շատ եյախան ե հենց պատենտի գծագրի համար, վորի իմաստն ե՝ տալ ինչքան կարելի յե պարզ ու չուտ ըմբռնելի պատկեր:

Դրա համար, այս դեպքում ամելի, քան տեխնիկական գծագրութեան մեջ, կարող ե ոգտակար լինել մի ուրիշ ձև, վորը կոչվում ե տեխնիկական գծագիր կամ թեք անկյունային հարթապատկերների ձև:


Սրա միտքը հետեյալն ե:



Գծագիր 45



Գծագիր 46



Գծագիր 46ա

Վերադառնանք գծ. 2-ին ու յենթադրենք, վոր առարկան բրոնզի եւնք վոչ թե մերկաչքի բարձրութեան վրա, այլ իջեցրել ենք ներքեւ, որինակ՝ մինչեւ կրծքի բարձրութեան: Այս դեպքում բացի առաջին կողմից, կտեսնենք առարկայի նաեւ վերեւի կողմերը:

Իսկ առարկան ձախ կամ աջ կողմը դարձնելու դեպքում կերեա նաեւ յերրորդ կողմը—կողքը:

Յեթե առարկան պատկերացնենք այնպէս, վոր միևնույն ժամանակ մենք տեսնենք նրա յերեւ կողմերը, կստանանք այն, ինչ վոր ցույց ե տված գծ. 45-ում:

Այդպիսի գծագիրը կոչվում ե «տեխնիկական գծագիր» կամ «թեք անկյունային հարթապատկեր», ի հարկե այսպիսի պատկերը հեշտ ե ըմբռնել ու պատկերացնել, քան թե սովորական գծագրերը. այստեղ հենց առաջին հայացքից պարզ ե առարկայի ձևը:

Այսպիսի գծադրերով կարելի չէ պարզել մեխանիզմի առանձին մասերը, փորձնք ձեռք գծադրից պատկերացնել դժվար է:

Թույլատրվում է պատկերի ամբողջ գծադիրը թեք անկյունային հարթապատկերով անել, թեպետ այդ միջոցին դիմում են հաղվադեպ, փորձահատե մի բարդ մեքենա այդ ձևով ցույց տալը չափազանց դժվար բան է:

22. Թեքանկյունային հարթապատկերների կառուցումը:

Հեշտ ու պարզ կլինի, յեթե այս ձևի կառուցումը պարզենք մի խորանարդի որինակի վրա (դժ. 46):

Այս պատկերից անստիճ էնք, վոր խորանարդը դիտողի առջև դանդաղ կողը պատկերացվում է իր բնական ձևով, այսինքն՝ քառակուսի ձևով: Մյուս յեթևու կողերը, փորձնք նույնպես քառակուսիներ են, պատկերացված են իբրև յեթևու գուգահեռակողմեր: Այսպիսով, խորանարդի այն կողերը, փորձնք հեռանում են դիտողից դեպի խորը, նկարի վրա ստանում են մոտ 30° թեքութուն:

Յեթե մենք յերեակայենք յերեք ուղիղ գծեր (առանցքներ) I, II ու III, փորձնքից առաջինը հորիզոնական է, յերկրորդն՝ ուղղահայաց, իսկ յերրորդը՝ 30° թեք, այն ժամանակ կարելի չէ կադմել հետևյալ կանոնը՝ թեքանկյունային հարթապատկերում առարկան պատկերացվում է այնպես, վոր սրա դեպի աջ դանդաղ բոլոր հորիզոնական կողերն առանցք I-ին լինեն գուգահեռ (այդպես են խորանարդի I, II և III կողերը), իսկ բոլոր ուղղահայաց կողերը՝ լինեն գուգահեռ առանցքի II-ին (այդպես են 4, 5 ու 6 կողերը) և վերջապես դիտողից դեպի խորը հեռացող կողերը պետք է լինեն գուգահեռ թեք առանցք III-ին (այդպես են 7, 8 ու 9 կողերը):

Այս կանոնի ճշմարտութունը համոզում է մեզ դժ. 45-ը յեթե այս գծադիրն ուղղաբությամբ դիտենք, այստեղ կտեսնենք վոչ թե մի հասարակ խորանարդ, այլ բավականի բարդ առարկա:

Նկատենք, վոր նկարին ուղղանման ձև տալու նպատակով հարկավոր է մոտավորապես յերկու անգամ փոքրացնել դիտողից հեռացող թեք կողերի յերկարութունը, և իսկապես, պատկերի վրա խորանարդի 7, 8, 9, կողերը, համեմատած մյուսների հետ, կարճացրած են, թեպետ բնականում բոլորն էլ միաչափ յերկարութուն ունեն:


Այս կանոնը չափադանելու դեպքում նկարն անբնական տափփորութուն կթողնի:

Երջանները թեքանկյունային հարթապատկերում ցույց են տրվում դժ. 47-ի համեմատ:

Յեթե չըջանն իր առաջին կողմից դարձած է դեպի դիտողը, որինակ՝ ներկայացնում է դիտողից դեպի խորը հեռացող հորիզոնական առանցքի վրա նստած մի անիվ, այդ դեպքում անիվը ցույց

են տալիս չըջադծի ձևով, այսինքն իր բնական ձևով (դժ. 47, պատ. 1):


Մյուս բոլոր դրություններում չըջանը ցույց է տրվում ձվադաճ: Որինակ, հորիզոնական սկավառակն ստանում է յերկարացրած հորիզոնական առանցքի ուղղությամբ ձվարդի ձև (դժ. 65, պատ. 2) իսկ ուղղահայաց սկավառակը, վոր դարձած է դեպի դի-



Գծագիր 48

տողն իր կողով, պատկերացվում է նույնպես ձվարդի ձևով, բայց յերկարացրած ուղղահայաց առանցքի ուղղությամբ (դժ. 45, պատ. 3):

Պարզ յերկրաչափական ձևեր ունեցող առարկաների պատկերացման դեպքում (այդպես են մեքենաների բոլոր մասերը) կարելի է վոչ թե սրանց ամեն մի ելեմենտի միայն ճիշտ պատկերացումը, այլ և սրանց համապատասխան կերպի դասավորումը: Որինակ, յեթե հարկավոր է պատկերացնել մի ուղղանկյուն սալ, վորի կենտրոնում դրված է մի գլան (դժ. 47, պատ. 4), դրա հա-



Գծագիր 47

մար սալը գծադրելուց հետո պետք է ամենից առաջ դանել սրա կենտրոնը, վոր կստանանք յերկու անկյունագծերի հատման կետում:

Այդ կետից հարկավոր է ուղղահայաց բարձրացնել, և այդ ուղղահայացի կետը կլորոշի գլանի դրությունը:

Բայցի այն, վոր թեքանկյունային հարթապատկերները պարզաբանում են կառուցվածքի առանձին մասերը, այդ ձևն առանձ-

նապես հարմար ե բարդ փոխանցումները պարզաբանելու դեպքում, որինակ փոկային, լծակային և այլն փոխանցումներ:

Այստեղ նկարը լրիվ փոխարինում ե գծադրին ու պատկերացման ատպարկում անտարակույս առավելութուն ունի:


Բերենք մի քանի որինակներ:

Դժ. 48-ի վրա ցույց ե տված բավականին բարդ փոխանցման մեխանիզմի սխեմատիկ պատկեր:

Փոխանցման մեխանիզմի կառուցվածքն ու սրա մասերի դասավորումն այստեղ այնքան պարզ են, վոր սխեման մինչև անգամ առանց բանավոր բացատրության հսկանալի յե:

Բայց փորձեցեք այս սխեման կառարել տեխնիկական գծագրության կանոններով, և դուք իսկույն կհամոզվեք, վոր գծադիրը չափազանց խառն ու անհասկանալի յե, յեթե մինչև անգամ ցույց տաք սրա յերկու կամ յերեք հարթապատկերները:

Ուշադրութուն դարձնենք, թե վերևում հիշված կառուցման կանոններն ինչպես են պահպանված: Հորիզոնական 1, 2 և 3 սունները, վորոնք դիտողից դեպի խորն են հեռանում, նկարի վրա պատ-



Դժադիր 49

կերացված են առանցքի III-ին զուգահեռ, թեք և ուղիղ գծերով: Այդ գրությունն են ընդունել նաև փոխանցող փոկի չորս մասերը: Սունների վրա նստած հասարակ ու առամնավոր անիվները ներկայացված են լրիվ շրջագծերով:

Դիտողի դիմաց նստած հորիզոնական սունի 5 ցույց ե տված զուգահեռ առանցքի I-ին հորիզոնական գծով:

Ուղղահայաց սունի 6 ու փոխանցվող 7 փոկի ուղղահայաց մասերը նկարված են առանցք II-ին զուգահեռ ու ուղղահայաց: Հինգ ու վեց սունների վրա նստած անիվները ցույց են տված ձվաձև:


Տեխնիկական նկարի ձևով պատկերացրած պատենտի գծադրի մի ուրիշ որինակ ցույց ե տված գծ. 49-ի վրա:

Այստեղ նկարված ե գործելու մեքենայի մի մասը:

Համեմատման համար նույն մեխանիզմն ընդհանուր հարթա-

պատկերի ձևով գծած ե գծ. 50-ում, համեմատումը ցույց ե տալիս, թե ինչպես գծ. 49-ը հասկանալի ու պարզ ե:

Հեշտ ե համոզվել, վոր գծ. 49-ի կառուցման միջոցը յենթադրված ե վերևում նկարգրած կանոններին՝ բոլոր ուղղահայաց մասերը—հրիչ 11-ը, ձողը, վորի վրա նստած ե բռնցք 1-ը, շտիֆտ 9, պահպանել են իրենց ուղղահայաց դրությունը նաև նկարում, այսինքն զուգահեռ են առանցքի II-ին: Դիտողից դեպի խորը հեռացող մասերը՝ սունի 3-ը, յեռաբազուկ լծակ 6-ի կողերը, թիթեղի 10-ը



Դժադիր 50

գծած են թեք առանցք III-ին զուգահեռ: Առաջի մակերևույթի վրա ընկած մասերի մյուս կողերը զուգահեռ են առանցք I-ին:

23. Լուսանկարներ: Յեթե դյուտարարն ունի իր առաջարկության տիպարը (մոդել), այդ դեպքում իր գործի համար ոգտակար ե, վոր նկարադրության գծադրերի հետ ներկայացնի իր առաջարկության տիպարի լուսանկարները, իբրև ոժանդակ նյութ:

Անհրաժեշտ ե աչքի առաջ ունենալ, վոր լուսանկարները վոր մի դեպքում չեն կարող փոխարինել գծադրերին. իսկ գծադրեր ներկայացնելը պարտադիր ե:

Վ Ե Ր Զ :

ՀԱՍԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ

Հարթապատկեր	— проекция	Հողակապ	— шарнир
Շրջապատ ծիր	— контур	Կալանդ	— бандаж, шина
Կետագիծ	— пунктир	Չզան	— тяга
Ազուլց	— муфта-втулка	Կ ո ճ Կ	— колодка
Կրկնատակ	— подпятник	Տակհար	— подбивка
Կ ո Կ	— ребро	Լցվածք	— набивка
Սարած	— прибор	Ուրվանկար	— очертание
Քողաշարք	— трубопровод	Կեռչան	— крюк
Պողոսիկ	— нарезка	Առանցքակալ	— поджипник
Վորտրակ	— виток	Կափարիչ	— клапан
Շաղափ	— сверло	Կ ո ճ	— катушка
Կառուցվածք	— конструкция	Սեղմակ	— зажим
Դարձաբեռ	— заклепка	Մխոց	— порцень
Սկավառակ	— диск	Շուռավիկ	— кривошип
Տապի խողովակ	— жаровая труба	Չվարդ	— овал
Պարուլը	— спираль	Ս ա լ	— плита
Ճանկանիվ	— храповое колесо	Հրիչ	— толкатель



Թարգմանչի կազմից	3
Հրատարակչու քյունի կազմից	4
Նախաբան	7

I ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ 9

1) Առարկաների հարթապատկերները	9
2) Ձերելացող գծերի հարթապատկերները	12
3) Կտրվածքներ	13
4) Հարթապատկերների բանակն ու դասավորումը	16
5) Գծագրի մասշտաբը	18
6) Հանրածանոթ մասերի հշանակման պայմաններ	20

II ԳՅՈՒՏԻ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԳԾԱԳՐԻ ՎՐԱ 24

7) Ինչու արտագրական գծագիրն անպետք է գյուտարարության կոմիտեին մերկայացնելու համար	24
8) Պատեմոտի գծագրերի պարզեցման միջոցներ	28
9) Ս խ ե մ ա ճ ե ռ	33

III ԳԾԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ 36

10) Թուղք յիվ կալիս	36
11) Տ ո լ շ	37
12) Ցեռամկյունի ու բանակ	38
13) Ռեչաֆեդեր ու կարկից	38
14) Գծագիր պատրաստելու կարգը	39
15) Ընդորմակումը կալիսի վրա	39
16) Մ ա Կ ա Գ Ր Ե Ր	39

IV ՊԱՏԵՆՏԻ ԳԾԱԳՐԻ ՁԵՎԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ 42

17) Գծագրի չափերը	42
18) Գծագրերի/բանակը յիվ որոնց պատրաստելու	44
19) Պատեմոտի գծագրերի մյուս առանձնահատկությունները	45
20) Գյուտի մկարագրությունը	46

V ԳՅՈՒՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՈԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ 51

21) Տեխնիկական գծագիր	51
22) Թեխնիկական հարթապատկերների կառուցումը	53
23) Լուսանկարներ	56
Բ ա Ն Ա Ր Ա Ն	57

2435

ՀՀ Ազգային գրադարան



NL0305899

ԳԻՆԳ 60 Կ.

